

Արեւիկե Սվազյան

ՄԵԾ ԵՂԵՈՂԸ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ
ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ
ԵՎ
ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԵՐԳԵՐՈՒՄ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ
ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ
ԵՎ
ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԵՐԳԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 1997

ԳՄԴ 63.3(22)5
Ս 850

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ
Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների դոկտոր Ս.Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Ա.Ս.ՀԱՄԲԱՐՅԱՆԸ,
պատմական գիտությունների թեկնածու Ա.Վ.ՍԱՖԱՐՅԱՆԸ

Ս 850

ՍՎԱԶՆՅԱՆ Վ.Գ.

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԱՐԵՎՍՏԱՀԱՅՈՑ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ
ԵՎ

ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԵՐԳԵՐՈՒՄ

Պատ. խմբ.՝ Ս.Բ.Հարությունյան
ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Գրքույկն ընդգրկում է Մեծ եղեռնից հրաշքով փրկված Արեւմտյան Հայաստանից,
Կիլիկիայից եւ Անատոլիայից տարագրված ականատես-վկանների ժո-
ղովրդական հուշապատումներն ու թուրքալեզու երգերը: Պատմական ու ժողո-
վրդագիտական տվյալների հիման վրա ներկայացված են արեւմտահայությանը
բաժին ընկած ողբերգական կյանքի դրվագները, ինչպես նաեւ նրանց արդար
գոյամարտերը իրենց տարրական՝ ապրելու իրավունքը պաշտպանելու համար:
Գրքույկն ունի նաեւ ռուսերեն, անգլերեն եւ ֆրանսերեն ամփոփումներ: Նախա-
տեսվում է ընթերցող լայն շրջանների համար:
Սույն աշխատությունն իբրեւ զեկուցում ընթերցվել է ՀՀ ԳԱԱ Պատմության եւ
Արեւելագիտության ինստիտուտների կազմակերպած Հայոց ցեղասպանության
80-ամյա հիշատակին նվիրված գիտաժողովում՝ 5 ապրիլի 1995 թ.:

Ս 0503020913
703(02)-97

ԳՄԴ 63.3(22)5



Բանասիրական գիտությունների դոկտոր, ժողովրդագետ Վերջին Սվազյանը վերապրող
Սարիամ Բաղդիչյանի եղերական հուշերն ու երգերը գրի առնելիս

* * *

Վերջին տասնամյակներին ավելի է մեծացել հետաքրքրությունը հայ
ժողովրդի համար ճակատագրական դարձած Մեծ եղեռնի իրադարձությունների
նկատմամբ, մանավանդ, երբ թուրքական պատմագրությունը փորձում է
աղավաղել պատմական ստույգ իրողությունները:

Այդ իսկ առումով, հրատարակված պաշտոնական փաստաթղթերից բացի,
պատմաճանաչողական կարեւոր արժեք են ներկայացնում նաեւ հիշյալ
ղեպքերի անմիջական տպավորությունների տակ ստեղծված ժողովրդական
հուշապատումներն ու պատմական բնույթի երգերը, որոնք Հայաստանում
տարբեր պատճառներով գրեթե չէին գրառվել եւ ուսումնասիրվել:

Դեռեւս 1950-ական թվականներից, անձնական նախաձեռնությամբ, սկսել
ենք գրի առնել /նաեւ ձայնագրել/ Մեծ եղեռնից մազապուրծ Արեւմտա-
հայաստանի, Կիլիկիայի եւ Անատոլիայի հայաբնակ գավառներից տարագրված,
Հայրենիքում հանգրվանած ականատես-վկաններից բազմաթիվ հուշա-
պատումներ, բանահյուսական տարաբնույթ նյութեր եւ հատկապես պատմական
զրույցներ ու երգեր: Մեծ եղեռնի վերաբերյալ ժողովրդական նյութերն ամփոփել
ենք մեր զույգ գրքերում, որտեղից եւ մեջբերվում են խնդրո առարկա

ժողովրդական նյութերը¹:

Արեւմտահայ տարագիր-հայրենադարձներից մեր գրառած հարյուրից ավելի հուշապատումների հետ միասին ի հայտ են եկել նաեւ բազմաթիվ պատմական բնույթի երգեր, որոնք ժողովրդական պարզ լեզվով վերարտադրում են թուրքական կառավարության կազմակերպած գորահավաքի, զինահավաքի, բռնագաղթի, ջարդի ու կոտորածի, ինչպես նաեւ արեւմտահայության արդար ու ազնիվ ոգորումների մասին հուզիչ ու տպավորիչ դրվագներ:

Ժողովրդական այդ երգերը հորինվել են ե՛ւ հայերեն, ե՛ւ թուրքերեն:

Անդրադառնալով թուրքալեզու երգերին հարկ է նշել, որ այդ երգերը բնութագրվում են հետեւյալ առանձնահատկություններով.

1. 3-րդից ավելի հայ ժողովրդի արեւմտահայ հատվածին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունների ներքո՝ այդ երգերը հագեցած են պատմականությամբ:

2. Նույնաման երգեր միաժամանակ հորինվել են զանազան տարբերակներով ու փոխակերպումներով: Հանգամանք, որը վկայում է այդ պատմական երգերի ժողովրդական բնույթը:

3. Թեպետ հիշյալ երգերը հորինվել են թուրքերեն, սակայն հայկական ծագում ունեն:

Վկայություններ կան, որ անցյալում «հայ բառ արտասանողներու լեզուները կտրած էին, հետեւաբար Կիլիկիայի մի շարք քաղաքների /Սիս, Ադանա, Տարսոն, Այնթապ/ եւ անոնց շրջակայքում ապրող հայերը կորուցել էին իրենց մայրենին»²: Եվ կամ՝ «թուրքերուն հարստահարությունն ու հալածանքն այնքան խիստ եղավ, որ հայախոս Անթեպ եղավ թուրքախոս, Փոքր Ասիո ուրիշ հայաբնակ գլխավոր քաղաքներուն պես: Եվ վերջին կտրուկ, սաստիկ հարվածը հայախոսությանը ենիչերիներն էին, որ տվին՝ ծայրատելով հայերեն խոսողներուն լեզուները»³:

XIX դ. վերջի եւ XX դարակազմի ազգագրագետ Սարգիս Հայկունին, նկարագրելով իր ժամանակի արեւմտահայերի քաղաքական, տնտեսական ու հոգեւոր իրավիճակը, գրել է. «Հայոց լեզուն թուրք մոլլաների կողմից արգելված էր եւ հայերեն յոթ բառը մի հայիությունը նկատելով սահմանված էր տուգանք՝ հինգ ոչխարի քանակով»⁴:

Ի վերջո այդ մասին է վկայում նաեւ մեր գրառած հայկական ժողովրդական երգը.

*Դարոցը մտան, վարժուհուն բռնեցին,
վա՛յ, աման,
Բերանը բացեցին, լեզուն կտրեցին,
Ա՛յս, աման:*

Քանի որ վարժուհին հանդգնել էր հայերեն ուսուցանել հայ մանուկներին:

Հարկադրյալ աքսորի պայմաններում բռնություններն ավելի են սաստկացել: Անշուշտ, չի բացառվում նաեւ երկարատեւ համատեղ կեցության պայմաններում երկու ժողովուրդների հոգեւոր մշակույթների ազդեցություններն ու փոխազդեցությունները:

Թուրքալեզու այդ երգերի մեջ հիշատակվում են հայկական բնակավայրերի եւ մարդկանց անվանումներ, հայերեն բառեր ու արտահայտություններ: Հարկ է նշել նաեւ, որ հայերն այդ երգերն ստեղծել են իրենց գիտեցած ոչ կատարյալ թուրքերենով⁵:

Այդ երգերն իրենց ժամանակին հորինվել են, ունեցել են լայն տարածում, կենցաղավարվել են, անցնելով բերնից բերան, ենթարկվել են ժողովրդական մշակման՝ ծնունդ տալով զանազան նոր տարբերակների:

Բերված բոլոր փաստարկները հիմք են տալիս հաստատելու, որ պատմական բնույթի հիշյալ թուրքալեզու ժողովրդական երգերը հորինվել են քաղաքական ստիպողական հանգամանքներում՝ ներկայացնելով լեզվական ծուլման նախնական մակարդակը:

Ինչ վերաբերում է բանասացներին, նրանք իրենց պատմական բնօրրանից վտարված հայերն են, որոնք 1915թ. Մեծ եղեռնի եւ նրան հաջորդող իրադարձությունների հետեւանքով բռնագաղթվել են Արեւմտյան Հայաստանի, Կիլիկիայի /1921թ./ եւ Անատոլիայի հայաբնակ վայրերից /1922 թ./:

Պատմական այդ իրադարձությունների հետեւանքով արեւմտահայության զգալի մասը բնաջնջվել է, իսկ աքսորի ճամփաներին կողոպտված, ունեզրկված եւ ուժասպառ, հրաշքով փրկվածները՝ մի կերպ վերապրել:

Այդ սահմեղեցուցիչ տեսարաններին ականատես-վկաներից շատերն աշխարհի տարբեր երկրներում գոյատևելուց հետո՝ Կ. Պոլսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Բալկանյան երկրներից, Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից,

* Բնականաբար, մեր գրառած բնագրերում կարելի է հանդիպել շեղումներ թուրքերեն լեզվի կանոններից, հայերեն բառեր կամ առանձին ձեւույթներ՝ թուրքերեն նախադասություններում: Այս առումով հատկանշական է, որ մենք ձգտել ենք անխաթար պահպանել բանասացների հաղորդած տեղեկատվությունը՝ ոչ միայն բովանդակության, այլեւ՝ ձեւի /լեզվի/ տեսանկյունից: Բանասացների հաղորդած նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Բանախոսության արխիվում, ինչպես նաեւ ՀՀ ԳԱ Հայոց ցեղասպանության բանագրան ինստիտուտի գիտական ֆոնդերում (Վերջինս Սվազյանի ֆոնդ):

1. ՍՎԱԶԼՅԱՆ Վ., Կիլիկիա. արեւմտահայոց բանավոր ավանդությունը, Երեւան, 1994 եւ Մեծ եղեռն. արեւմտահայոց բանավոր վկայություններ, Երեւան, 1995:

2. ԳԱՆՈՒՍՏՅԱՆ ԳՐ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Չեթուն, Նյու Յորք, 1934, էջ 698:

3. ՍԱՐԳՏՅԱՆ Գ., Պատմություն Անթեպի հայոց, հ. Ա, Լոս Անջելես, 1953, էջ 5:

4. ՍՎԱԶԼՅԱՆ Վ., Մարգիս Հայկունի (կյանքն ու գործը), «Հայ ազգագրություն եւ բանախոսություն», հ. 4, Երեւան, 1973, էջ 35:

իրաքից եւ այլ գաղթօջախներից, հայրենադարձվել են Մայր Հայաստան եւ բնակություն հաստատել իրենց երբեմնի բնօրրանի հիշատակները խորհրդանշող Նոր Արաբկիր, Նոր Կիլիկիա, Նոր Ջեթուն, Նոր Հաճն, Նոր Մարաշ, Նոր Այնթապ, Մուսա լեռ, Եղեւիս եւ այլ նորակառույց բնակավայրերում:

Հայրենադարձների ավագ սերնդի բազմաթիվ ներկայացուցիչներ /230 բանասաց/, որոնք ականատես-վկաներն են այդ ահավոր ողբերգությանը, արցունքն աչքերին հիշել ու մեզ են պատմել իրենց տխուր անցյալը, թե ինչպես թուրքերը զազանաբար հոշոտել են իրենց հայրերին ու մայրերին, պատվազրկել՝ իրենց քույրերին:

Սեր արժանահիշատակ բանասացներից են մուսալեռցի՝ Հովհաննես Ղուդակյանն ու իր կին Սիման, Պողոս Սուպուկյանը, Սերոբ եւ Գրիգոր Գյոզալյանները, Մարիամ Բաղդիշյանը, զեյթունցի՝ Կարապետ Թոզլյանն ու Հովսեփ Բշտիկյանը, Եվա Չուլյանն ու Գայանե Ատուրյանը, մարաշցի՝ Վերգինե Մայիկյանն ու Մայրանուշ Վարդյանը, այնթապցի՝ Արշալույս եւ Հակոբ Ջրջանները, Նուրիցա Քյուրքջյանն ու Գեւորգ Հեքիմյանը, բեյլանցի՝ Քլարուհի Բահարյանն ու Գեւորգ Գյոզալյանը, ուրֆացի՝ Խորեն, Խաչեր եւ Նվարդ Աբլաբուտյանները, հաճնցի՝ Սաթենիկ եւ Ահարոն Մանկոյանները, Նազենի Սաթամյանն ու Երվանդ Աբարյանը, մերսինցի՝ Սողոմոն Եթենեկյանը, Ֆրնդըմազցի՝ Հարություն Աբրաջյանը, խարբերդցի՝ Մարիամ Խաբուրջյանը, Թագուհի եւ Գարեգին Թուրուզիկյանները, տիգրանակերտցի՝ Ազնիվ Տերունյանը, արաբկիրցի՝ Սրբուհի եւ Պետրոս Կիլիշյանները, Լուիզ եւ Նազարեթ Վարժապետյանները, կոնիացի՝ Սաթենիկ Գույունջյանը, վանցի՝ Արմենիկ Եկարյանը, բիբլիսցի՝ Թագուհի Անտոնյանը, մալաթիացի՝ Սիրանուշ Թաշճյանը, սեբաստացի՝ Սուրեն Սարգսյանը, կեսարացի՝ Պայծառ Երկաթը եւ Հատ ու Հատ ուրիշներ Արեւմտյան Հայաստանից, Կիլիկիայից եւ Անատոլիայի հայաբնակ վայրերից: Նրանցից Հատերն այսօր ոչ եւս են. հարգանք նրանց հիշատակին:

Սուլթան Համիդի իշխանության տապալումից եւ 1908 թվի Սահմանադրության ընդունումից հետո, կառավարության գլուխ անցած երիտթուրքերը, որդեգրելով սուլթան Համիդի ջարդարար քաղաքականությունը եւ դավանելով պանթուրքական եւ պանիսլամական գաղափարախոսությունը, ձգտում էին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը, այլեւ բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել-թուրքացնել հայերին եւ մյուս հպատակ ժողովուրդներին, ստեղծել համաթուրանական համաշխարհային տերություն:

Պատմաքաղաքական այդ հանգամանքներում է կազմակերպվել «Կիլիկիայի գիշերը» 1909թ. Ադանայում, որը հայ ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Ղըյմա Ադանա» /Ջարդված Ադանա/: Այդ են վկայում ադանացի Սրբուհի

Մակարյանի /ծ. 1903թ./ եւ Սիբայել Քեշիշյանի /ծ. 1904թ./ պատմած հուշերը:
Պատմական այդ իրադարձությունների անմիջական տպավորությունների տակ է ստեղծվել արտահայտչական խորությամբ ու պատկերավորությամբ հագեցած ժողովրդական հետեւյալ երգը.

Hey, çamlar, çamlar, al açık çamlar!
Her güneş vurınca sakız damlar,
Of, of, Adana ırmığı leş ilan kanlar!
İşte geldim sana kıyma Adana.
Of, of, işte gördüm size, kıyma çocuklar!

Հեն, մայրիներ, մայրիներ ի գույն-գույն մայրիներ,
Ամեն արեւ դիպչելիս՝ խեղճ ծորում է կաթ-կաթ,
Ավա՛ղ, Ադանայի գետում՝ արյուն եւ դիակ,
Ահա քեզ եկա, ջարդված Ադանա,
Ավա՛ղ, ձեզ տեսա, մանուկներ մորթված:

Ըստ էության այդ Մեծ եղեռնի սկզբն էր, երբ երիտթուրքերը տենդորեն նախապատրաստվում էին հիմնովին բնաջնջել հայ ժողովրդին՝ սպասելով հարմար առիթի: Այդ առիթն ստեղծվեց, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Չավթոդական այդ պատերազմը եւս իր գեղարվեստական արտացոլումն է գտել ժողովրդական երգի մեջ.

Pencereden yel geliyor,
Bak dışarı kim geliyor?
Deste-deste gül geliyor.
Ölüm bana zor geliyor.
Uyan sultan, zalim uyan!
Kan ağlıyor cümle cihan!

Պատուհանից գուլ է գալիս,
Տեսեք դուրսից ո՞վ է գալիս,
Փունջ-փունջ վարդեր են գալիս,
Մահն ինձ դժվար է գալիս.
Ջարթնի՛ր, սուլթա՛ն, բռնակա՛ն զարթնի՛ր.
Ողջ աշխարհն արյուն է լալիս:

Գարնան զարթոնքի՝ «փունջ-փունջ վարդերի» գեղատեսիլ պատկերին կտրուկ հակադրված է մահվան /պատերազմի/ սարսափը եւ երկրի ղեկավարի (zalim sultan) անտարբերությունը ժողովրդի ճակատագրի նկատմամբ, անգամ այն ժամանակ, երբ «ողջ աշխարհն արյուն է լալիս»:

Այնինչ այդ այնպիսի մի ժամանակաշրջան էր, երբ Թուրքիայում ապրող քրիստոնյա ազգերի, այդ թվում նաեւ հայերի համար մեծագույն չարիք էր դարձել զորահավաքն ու զինահավաքը: Թուրքական ոստիկանները «զենք» փնտրելու պատրվակի տակ ավերում էին հայերի տները, կողոպտում նրանց ունեցվածքը, ձերբակալում, սպանում Հատերին: Նման դեպքերի շուրջն է հորինվել հետեւյալ թուրքական երգը.

- Ulan gâvür, doğru söyle:
Senin martin var imiş?

- Հեն, գլավի՛ր, միշտն առա.
Քո մոտ հրացան կա՞:

* Թուրքալեզու երգերի հայերեն բառացի թարգմանությունները մերն են:

- Hayır, efendim! İftiradır.
Bilmem, görmedim,
Bilmem, görmedim.

- Ոչ, տե՛ր իմ, հերյուրանք է:
Չգիտեմ, չեմ տեսել,
Չգիտեմ, չեմ տեսել:

Եվ ծածուկ՝ հայերենով ավելացնում.

Պատեն կախված է՝ չեմ ըսեր:

- Ulan gâvur, doğru söyle:
Sen Serop paşayı tanırsın?
- Hayır, efendim! İftiradır.
Bilmem, görmedim,
Bilmem, görmedim.

- Դե՛յ, գյավո՛ւր, ճիշտն ասա,
Սերոբ փաշային ճանաչո՞ւմ ես:
- Ոչ, տե՛ր իմ, հերյուրանք է:
Չգիտեմ, չեմ տեսել,
Չգիտեմ, չեմ տեսել:

Եվ ծածուկ՝ հայերենով ավելացնում.

Գիտեմ՝ չեմ ըսեր,
Հայոց ազգը չեմ մատներ:

Զորահավաքի անվան տակ 18-45 տարեկան հայ տղամարդկանց ներգրավում էին աշխատանքային գումարտակների մեջ եւ համաձայն կառավարական հատուկ հրահանգի, աչքից հեռու վայրերում՝ սպանում: Այդ մասին է վկայում չանաքքալեցի Գեւորգ Զուլալյանի /ծ. 1907թ./ պատմած հուշը:

Թուրքական բանակին բռնությամբ զինվորագրված հայ երիտասարդը նախազգույն է, որ «սրան մահվան ճամփա կասեն», այնինչ «հայերն այնտեղ շատ ու շատ են»:

Ana! uyandır beni, gideyim talime,
Aynalı martini alayım elime,
Gitmeğe doğru vatan yoluna,
Buna ölüm yolu, derler,
Allah saklasın!
Ermeniler çokdır, derler,
Allah kurtarsın!

Մա՛յր, արթնացրու ինձ, գնամ վարժանքի,
Չեռքս վերցնեմ հրացան-մարրի՛ն՝
Գնալու ուղիդ ճամփով հայրենի,
Սրան մահվան ճամփա, կասեն,
Աստվա՛ծ պահպանի.
Հայերն այնտեղ շատ են, կասեն,
Աստվա՛ծ բող փրկի:

Եթե այս երգի մեջ հայ պատանին պատրաստ է ծառայելու թուրքական բանակին, կատարելու իր քաղաքացիական պարտքը Հայրենիքի /Vatan/ նկատմամբ, որտեղ ինքն ապրում է, ապա՝ հետագայում նա արդեն գիտակցում է, որ «զորակոչի» անվան տակ իր նմաններին հեռացնում են իրենց հարազատներից.

Odalar yaptırdım bir ucdan uca,
İçinde yatmadım bir gün, bir gecâ,
Tivenkim çadırdâ asıllı kaldı,
Cehizim sandıkta basıllı kaldı,
Konma, bülbul, konma mezartaşına,
Şu gençlikte neler geldi başıma!

Ծայրից-ծայր շինեցի սենյակներ,
Սեջը չքնեցի մի օր, մի գիշեր,
Հրացանս պատից կախված մնաց,
Օժիտս սնդուկում ծալված մնաց,
Մի՛ թափիր, տիսա՛ն, մի՛ թափիր շիրմաքարիս.
Երիտասարդության ինչե՛ր եկան իմ գլխիս:

Եվ զորակոչված հայ երիտասարդը խնդրում է դաժան չերբեզից՝ խնայել իրեն, քանի որ իր «նոր նշանածը կմնա այրի»:

Kıyama, çerkez, kıyama tatlı canıma:
Yeni nişanlım var karalar bağlar.

Չերբե՛զ, քաղցր կյանքս խնայի՛ր.
Նոր նշանածս սեւ կկապի:

Իսկ «նշանածը» Ստամբուլի բովված աղի կաղինի պես «աղի արցունք» է քափում աչքերից.

Tuzlu olur İstanbul fıstığı,
Taştan olur ermeninin yastığı,
Kör olasın şu meydanın dostluğu*:
Aldılar nazlı yarım, duyan ağlasın,
Aman, aman, mayrik**!

Աղի է լինում Ստամբուլի կաղինը.
Քարից է լինում հայերի բարձը.
Կուրանար այս կեղծ բարեկամությունը՝
Տարան սիրած յարիս՝ լսող թող լաց լինի,
Ավա՛դ, ավա՛դ, մայրի՛կ:

Այդ ժամանակ Թուրքիայում հատուկ հրահանգ կար՝ բանակում ծառայող քրիստոնյաներին, առանց որեւէ զանցանքի, իրենց զորախմբերից հեռացնել եւ ընդհանուրի աչքից հեռու, ծածուկ վայրերում գնդակահարել կամ՝ բանտերում սովամահ անել:

Haniya da benim tuz ekmeyi yiyenler,
"Ehbab ölmeden, ben ölürüm" diyenler.

Ո՞րտեղ են իմ աղ ու հացն ուտողները.
«Ընկերս չեռած» ես մեռնեմ՝ ասողները:

Այնինչ նրա հավատարիմ հայ ընկերները.

Tıglik*** Sarkis***,
Taslak*** Misak*** vurulmuş,

Տղիկ/յան՝ Սարգիսին եւ
Թաւաք/յան՝ Միսակին սպանեցին:

Իսկ ինքը՝ հայ զինվորը բանտարկված է:

* Նկատի ունի թուրքական կառավարության ընդունած, բայց չիրականացրած Սահմանադրությունը /1908թ./:
** Օգտագործված է հայերեն «մայրիկ» բառը:
*** Հայկական անուն է:

Mapushanede üstümüze damlıyor.

Բանում մեզ վրա կարում է:

Իսկ նրա հարազատները.

Anam da baş üstüne ağlıyor,
Beçara nişanlım karalar bağlıyor.

Մայրս գլխիս վրա լաց է լինում,
Խեղճ նշանածս տեւ է կարում:

Բանտից ու զնդանից բացի, հայ զինվորին ամեն թույլն մահ էր սպառնում.

Varın söyleyin anneme-damda yatmasın,
Toros* oğlum gelir diye yola bakmasın,
Anama deyin-boğçam açmasın,
Çuha şalvanıma uşkur dakmasın,
Gayrı ben silama varamaz oldum,
İskuhî* nişanlımı göremez oldum,
Daracık sokaktan geçemez oldum.

Ասացեք մորս՝ տանիքում չքնի,
Թորոս որդիս գալիս է ասելով՝ ճամփին չնայի,
Ասացեք մորս՝ օժիտս չբացի,
Բողբա շալվարիս խոնքան չանցկացնի,
Արդեն ես չեմ կարող օգնել հայրենիքիս,
Տեսնել չեմ կարող Իսկուհի նշանածիս,
Դուրս գալ չեմ կարող այս նեղ վիճակից:

Եվ հայ զինվորի մայրն անիծում է զորահավաքը, որն ավելի նման է կոտորածի, քանի որ գարնան վարդերի ու սոխակների հետ հայ երիտասարդները եւս գնացին, բայց՝ ընդմիշտ.

Kör olasin sen, Enver paşa!
Ermeni cahel kalmadı,
Gitti gül, gitti bülbül, ne diyelim!
İster ağla, ister gül, ne diyelim!

Կուրանա՛ս դու, Էնվե՛ր փաշա,
Հայ երիտասարդ էլ չմնաց.
Անցավ վարդը, անցավ սոխակը. ի՞նչ ասես,
Կուգես՝ լաց, կուգես՝ խնդա. ի՞նչ ասես:

Ժողովրդի ատելությունն աստիճանաբար վեր է ածվում ծաղր ու ծանակի, եւ սեղմ բառերով ուրվագծվում է Թալեաթ փաշայի արտաքինը, որը նաեւ նրա ներքին բնութագիրն է.

Talaat paşa eşak gibi,
Bıyıklan yular gibi.

Թալեաթ փաշան՝ էշի պես,
Բեղերը երկար՝ սանձի պես:

Զորահավաքին ու զինահավաքին հաջորդել է հայ մտավորականների ձերբակալությունը, որպեսզի հայ ժողովուրդը զրկվի ոչ միայն իր ռազմունակ ուժից, այլեւ՝ ղեկավար մտքից: Մեկ գիշերվա ընթացքում ձերբակալում են

*Հայկական անուն է:

Կ.Պոլսի գրեթե բոլոր մտավորականներին, որոնց ուղարկում են Միջագետքի անապատները եւ ոչնչացնում: Նրանց մեջ էին օսմանյան խորհրդարանի անդամ, հայտնի իրավաբան-գրող Գրիգոր Զոհրապը, բանաստեղծ Դանիել Վարուժանը, պատմավիպագիր Սմբատ Բյուրատը, բժիշկներ Նազարեթ Տաղավարյանն ու Ռուբեն Սեւակը, մեծ երգահան Կոմիտասը եւ շատ ու շատ ուրիշներ:

1915 թ. մարտի 15-ին եւ ապրիլի 3-ին ռուսական հետախուզությունը Թուրքիայի մասին հաղորդել է, որ ամբողջ երկրում անց են կացվում հայերի ձերբակալություններ, սիստեմատիկ կոտորածներ՝ Էրզրումում, Դյորսոյում, Զեյթունում, արյունալի ընդհարումներ՝ Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնություններ, կոդալուտ, սպանություններ՝ Ակնում եւ ամբողջ Փոքր-Հայքում. ժողովրդի տնտեսական քայքայում, ընդհանուր կոտորած:

Պատերազմական գործողություններին առնչվող Վանի վիլայեթում, մինչեւ ռուսական զորքերի առաջխաղացումը, թուրքերը հասցրել էին տեղում բնաջնջել հազարավոր հայերի, եւ երբ ռուսական զորքերը մտնում են Վան, նրանց հետ նաեւ հայ գրողներ Դովհաննես Թումանյանն ու Ալեքսանդր Շիրվանզադեն, ականատես են դառնում սահմուկեցուցիչ տեսարանների. «Երեխաների ճակատներին մեխ են խփել, - գրում է Դ. Թումանյանն իր հուշերում, - կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել՝ մինչեւ կեսը դրել են պղինձը եւ կեսից ներքեւ եփել, որ մյուս կեսը կենդանի տեսնի ու զգա... շիկացած երկաթով կտրել են մարմնի զանազան տեղերը եւ կրակի վրա խորովել, կենդանի խորովել, ծնողների առաջ՝ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին»⁵:

Եվ երբ ռուսական զորքերը նահանջում են, նրանց հետեւից Արեւելյան Հայաստան է գաղթում նաեւ ինքնապաշտպանական մարտերում հերոսաբար մարտնչած Վանի, Սասունի, Մուշի, Շատախի, Շապին Գարահիսարի եւ այլ տեղավայրերի հայությունը:

Բռնություններն անասելի չափերի էին հասել նաեւ Խարբերդում, Պոնտոսում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Արեւմտյան եւ Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ վայրերում՝ Իզմիրում, Բուրսայում, Անկարայում, Կոնիայում եւ այլուր: Աննկարագրելի դաժանությամբ ոչնչացնում էին բոլորին՝ չխնայելով նույնիսկ մանուկներին:

Մղձավանջային էր դարձել նաեւ Կիլիկիայի հայության կյանքը. Հայաշատ Կիլիկիայով էր անցնում տնտեսական բացառիկ կարեւորություններ կայացնող Բաղդադի երկաթուղին: Այդ հանգամանքը մտահոգում էր Թուրքիայի կառավարությանը, քանի որ Կիլիկիայի աշխատասեր ու գործունյա հայությունն իր բարգավաճ վիճակով կարող էր տիրապետող դառնալ Թուրքիայի

5.ԹԻՖԼԻՍԻՆ 3.6, Երևան, 1959, էջ 212-213:

տնտեսության մեջ: Լեռնային Կիլիկիայում՝ Յաճընից, Ձեյթունից մինչև Դյորտյուլ, սփռված էին հայկական գյուղերն ու ավանները, որոնց բնակիչները թեև զբաղվում էին մետաքսագործությամբ, գորգագործությամբ եւ այլ տոհմիկ արհեստներով, սակայն նոր սերունդը բավական լուսավորյալ էր՝ այնտեղ գործող հայ եւ օտար դպրոցների ու կոլեջների շնորհիվ: Բացի այդ, 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո խոստացված, բայց չիրականացած «Բարեփոխումների» հետ կապված թուրքիայի շատ գավառներում ծայր առած բռնություններն ու կոտորածները դեռեւս լրիվ չէին բնաջնջել ի բնե ազատատենչ կիլիկիացիներին: Կիլիկիայի արծվաբույն Ձեյթունն արդեն վաղուց թուրքական բռնակալության կիզակետն էր դարձել, ժամանակն էր հին հաշիվները մաքրել նաեւ համարձակ զեյթունցիների հետ: Այդ դեպքերի մանրամասնություններն են հիշատակված զեյթունցի վերապրողներ Կարապետ Թոգլյանի /ծ.1903թ./, Յուսեփ Բշտիկյանի /ծ.1903թ./, Եվա Չուլյանի /ծ.1903թ./, Սեդրակ Գայթեկյանի /ծ.1903թ./ եւ Գայանե Ատուրյանի /ծ.1909թ./ պատմած հուշերում:

Կիլիկիացիները, որոնք հայկական վերջին թագավորության /XI-XIV դդ./ արժանավոր հետնորդներն էին եւ անցյալի ազգային-ազատագրական պայքարի փառապանծ ավանդույթներ ունեին, կարող էին այս անգամ եւս անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարեցին Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայանն ու հայ երեւելիներից շատերը, որոնք խաբվելով թուրքական կառավարության կեղծ խոստումներից հնազանդության կոչ արեցին հայերին՝ պատճառաբանելով, որ «Փոքր շարժում մը կրնա վտանգել Թուրքիո նահանգներու ամբողջ հայությանը»: Այդ մասին է վիպում նաեւ մեր գրառած "Gatoğjosdan geldi kara haberi" «Կաթողիկոսից եկավ սեւ լուրը» ծավալուն վիպերգը: Կառավարությունը, ինչպես այլուր, Կիլիկիայում եւս հավաքել էր հայերի զենքերը, երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ, իսկ անօգնական ժողովրդին կողոտում ու թալանում էին դաժան զապտիյներն ու ոստիկանները, պատվազրկում էին հայ աղջիկներին ու կանանց: Հղիմանալով այդ անարգանքներին, քսանի չափ երիտասարդ զեյթունցիներ Փանոս Չագրյանի գլխավորությամբ, դիմում են ինքնապաշտպանության եւ կրակ են բացում: Հաջորդ օրն իսկ Ձեյթունի 300 երեւելիներ շղթայակապ տարվում են Մարաշ, որոնց մի մասին թուրքերը կախաղան են հանում, իսկ մնացածներին՝ աքսորում: Այնուհետեւ ավերվում է Ձեյթունը:

1915 թվի գարնանից սկսվում է Կիլիկիայի հայության բռնազաղթն ու կոտորածը: Մեկը մյուսի հետեւից դատարկվում է Մարաշը, Այնթապը, Յաճընը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը եւ այլ հայաբնակ վայրեր:

*Sürgünlük çıktı, köy boşandı,
Benim kıymetli malımı türklere kaldı,
Çoluk-çocuk yocu oldu,
Alan-talanı başladı.*

*Աքսորն սկսվեց, գյուղը դատարկվեց,
Թանկարժեք ունեցվածքս թուրքերին մնաց,
Ճանկա ընկանք մամուկ ու ծեր,
Ալան-թալանն սկսվեց:*

Անգեն ու անդեկ մնացած անօգնական հայ ժողովուրդը, մտրակի ու սվինների հարվածների ներքո, արցունքն աչքերին, քշվում էր իր պապենական շեն օջախներից: Թուրքական կառավարության նախաձեռնած ցեղասպանության քաղաքականությունն ընդգրկել էր օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերը: Հայերի բնաջնջումն իրականացվում էր եւ տեղերում, եւ թե աքսորավայրերում՝ Միջագետքի անապատներում. հատկապես Դեր Ջորում /Դեյր էզ Ջոր/ եւ Ռաս ուլ Այնում:

Ըստ մեր բանասացների հաղորդած տեղեկությունների, կոտորածն սկսվել է ապրիլին՝ Ձատիկի կիրակին, Քրիստոսի խաչելության օրը, որպեսզի հայերը եւս Քրիստոսի չարչարանքներին արժանանան. «Հայերն իրենց արյունով պիտի ներկեն իրենց Ձատիկի հավկիթները», - ասում էին թուրքերը, իսկ հայերի տառապանքը երգ դարձած հնչում էր աղեկտուր.

Zatik-kiraki çadır söktüler,
Bütün ermenileri çöle döktüler,
Keçi gibi ermenileri kestiler,
Dininin uğrına ölen ermeni!*

*Ձատիկ-կիրակի վրաններ քանդեցին,
Բոլոր հայերին անապատը լցրեցին,
Հայերին այծերի պես մորթեցին,
Հանուն հավատի մեռնող հայեր:*

Եվ սկսվում են հայերի աննկարագրելի չարչարանքները.

*Ağaçlardan kuş uçtu,
Yandı yürek tutuştu
Yanma, yüreğim, yanma!
Bu ayrılık bize düştü,
Bu muhacirlik bize düştü,
Bu derzorlik bize düştü.*

*Ծառերից հավքը թռավ,
Վառվեց սիրտս՝ թունդ ելավ,
Մի՛ վառվիր, սի՛րտ իմ, մի՛ վառվիր.
Այս բաժանումն էր մեր բաժին,
Այս գաղթականությունն էր մեր բաժին,
Այս դերզորականությունն էր մեր բաժին:*

Դեր Ջորի անապատը դարձել էր Հայոց ցեղասպանության կենդանի գերեզմանոցը, որտեղից ազատվելու փրկություն չկար.

*Der Zor gidersem, gelemem belki,
Ne ekmek, ne su ölürüm belki.*

*Դեր Ջոր որ գնամ՝ զուցե չգամ ետ,
Սուրճ հաց, առանց ջուր՝ զուցե եւ մեռնեմ:*

Ձանգվածային լրատվության միջոցները լռում էին: Այնինչ քաղաքակիրթ

*Օգտագործված է հայերեն «զատիկ-կիրակի» բառը:

մարդկության աչքերի առաջ նահատակվում ու բնաջնջվում էր աշխատասեր ու ստեղծագործ, հնագույն մի ժողովուրդ, որի միակ մեղքը հայ լինելն էր.

Der Zor varmadan ermeni muhacirin oturmuş *Դեր Չոր չհասած՝ հայ գաղթականը նստած*
Hongur-hongur ağlıyor. *Հոնգուր-հոնգուր լաց է լինում,*

որովհետև ահավոր էր հայության վիճակը.

Der Zor çölünde üç ağaç incir, *Դեր Չորի անապատում երեք բզնի,*
Elimde-kelepçe, boynumda-zincir, *Չեռներխ՝ ծեռկապ, շղթան՝ վզիս.*
Zincir kimildadıkca-yüreğim incir. *Շղթան զնգզնգում է, սիրտս՝ մղկտում.*
Dininin uğruna ölen ermeni! *Հանուն հավատի մեռնող հայեր:*

Բռնագաղթված հայերը մահվան այդ ճամփան անցնում էին բոկոտն ու արյունվա, պապակ շուրթերով՝ կիզիչ արեւի տակ.

Der Zor çölünde bitmedi yeşil, *Դեր Չորի անապատում կանաչ չբուսավ,*
Kurşına düzdüler elli bin kişi: *Գնդակահարեցին հիսուն հազար հայ.*
Meraktan dököldü milletin dişi, *Ժողովրդի ատամները վտից բախվեցին.*
Dininin uğruna ölen ermeni! *Հանուն հավատի մեռնող հայեր:*

Եվ գնդակահարվածների արյունով էր ներկվել ամեն ինչ.

Der Zor çölünde bürüdü düman, *Մշուշն է պատել Դեր Չորի անապատին,*
Amanım, yaman, hallerim yaman! *Ավա՛ղ, ավա՛ղ, մեր վիճակն է ողբալի,*
İnsan ve yeşil boyandı kana *Մարդիկ եւ բույսեր արյանք ներկվեցին,*
Dininin uğruna ölen ermeni! *Հանուն հավատի մեռնող հայեր:*

Անխնայորեն բնաջնջվում էր հայ ժողովուրդը.

Der Zor çölünde çürüdüm kaldım, *Դեր Չորի անապատում փտեցի, մնացի,*
Karğalara tahin oldum, kaldım, *Կերակուր դարձա սեւ ագռավներիս,*
Oy anam, oy anam, halımız yaman! *Վա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ, ողբալի է մեր վիճակը.*
Der Zor çöllerinde kaldığım zaman. *Դեր Չորի անապատում մեր եղած ժամանակը:*

Իսկ հայ ժողովուրդն իր տառապանքի մեջ մենակ էր եւ անօգնական.

Der Zor çölünde yaralı çokdır, *Դեր Չորի անապատում վիրավոր շատ կա,*
Gelme, doktor, gelme, çaresi yokdur, *Մի՛ գա, բժիշկ, մի՛ գա. մեկ է՝ հույս չկա.*
Allahdan başka kimsemiz yokdur, *Աստուծոց բացի էլ ոչ ոք չկա,*
Dininin uğruna ölen ermeni! *Հանուն հավատի մեռնող հայեր:*

Եվ հայ ժողովրդի տխրաբախիժ երգը վեր է ածվել աղոթքի.

Çıka-çıkla çıktım yokuş başına, *Ելա, բարձրացա գագաթը սարի,*
Neler geldi ermeninin başına! *Ինչե՛ր եկան գլուխը հայի,*
Hızor* allah, hızor, yetiş! *Հզոր Աստվա՛ծ, օգնության հասիր,*
Ermeni milletini kurtar, geçir! *Հայ ժողովրդին փրկի՛ր, ազատի՛ր:*

Ելա, բարձրացա գագաթը սարի,
Ինչե՛ր եկան գլուխը հայի,
Հզոր Աստվա՛ծ, օգնության հասիր,
Հայ ժողովրդին փրկի՛ր, ազատի՛ր:

Ու ժողովրդի ողբերգական վիճակին հակադրված է բնության ճաճանչափայլ գեղեցկությունը.

Sabahtan çıktım, güneş parlıyor, *Առավոտյան արթնացա՝ արեւն էր շողում,*
Osmanlı askyari silah yağıyor, *Օսմանցի ասկարները զենքերեճ են յուղում,*
Ermeniyeye baktım - yaman ağlıyor, *Հայերին նայեցի՝ սաստիկ էին լաց լինում.*
Dininin uğruna ölen ermeni! *Հանուն հավատի մեռնող հայեր:*

Առավոտյան արթնացա՝ արեւն էր շողում,
Օսմանցի ասկարները զենքերեճ են յուղում,
Հայերին նայեցի՝ սաստիկ էին լաց լինում.
Հանուն հավատի մեռնող հայեր:

Իսկ անապատի օղը հագեցած էր դիակների նեխահոտով.

Der Zorun içinde nâneler biter, *Դեր Չորի անապատում անանուխն է բուսել,*
Geberinin kokusu dünyaya yeter, *Դիակների նեխահոտն աշխարհն է բռնել,*
Bu sürgünlük bize ölümden beter, *Այս արտորդ մեզ մահից էլ վատ է.*
Dininin uğruna ölen ermeni! *Հանուն հավատի մեռնող հայեր:*

Դեր Չորի անապատում անանուխն է բուսել,
Դիակների նեխահոտն աշխարհն է բռնել,
Այս արտորդ մեզ մահից էլ վատ է.
Հանուն հավատի մեռնող հայեր:

Ապականված էր ոչ միայն անապատի օղը, այլեւ բունավորված էր ջուրը.

Der Zorun içinde zincirli kuyu, *Դեր Չորի մեջ շղթայով ջրհոր,*
Ermeniler içtiler zehirli suyu. *Հայերը խմեցին ջուրը բունավոր:*

Դեր Չորի մեջ շղթայով ջրհոր,
Հայերը խմեցին ջուրը բունավոր:

Հասարակական չարիքին ավելացել էր նաեւ տարերային աղետը՝ տիֆի համաճարակը.

Der Zor çölünde bir sıra mişmiş, *Դեր Չորի անապատում մի շարք ծիրանի,*
Ermeni muhaciri tifoza düşmüş, *Հայ գաղթականները վարակվել են տիֆ.*
Oy anam, oy anam, halımız yaman! *Վա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ, ողբալի է մեր վիճակը.*
Der Zor çölüne bulduğum zaman. *Դեր Չորի անապատում մեր եղած ժամանակը:*

Դեր Չորի անապատում մի շարք ծիրանի,
Հայ գաղթականները վարակվել են տիֆ.
Վա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ, ողբալի է մեր վիճակը.
Դեր Չորի անապատում մեր եղած ժամանակը:

Եվ համատարած այդ չարիքից փրկություն չկա, քանի որ ողջ մնացողների վիճակն ավելի էր անմխիթար: Այնուհետեւ միմյանց են հաջորդում սահմոկեցուցիչ տեսարանները.

* Օգտագործված է հայերեն «հզոր» բառը:

Der Zor çölündä uzanmış, yatmış,
Kellesi yokdur, ki yüzüne bakayım.

Դեր Ջորի անապատում փռվել, պառկել է:
Գլուխը՝ չկա, որ դեմքը տեսնեմ:

Եվ լսվում են նրանց հոգեվարքի խուլ հառաչանքները.

Der Zor varınca koptu kıyamet,
Bu kadar muhacir kime emanet?
Ermeniye baktım-yaman ağlıyor,
Dininin uğruna ölen ermeni!

Աշխարհը շուտ եկավ Դեր Ջորի անապատում.
Այսքան զաղթական վստահված է ո՞ւմ.
Հայերին նայեցի՝ սաստիկ էին լաց լինում,
Հանուն հավատի մեռնող հա՛յեր:

«Հանուն հավատի» մեռնող հայերի դիակները սփռված էին ամենուրեք, իսկ օսմանցի զինվորները դարձել էին «մսագործ»:

Der Zor dedikleri büyük kasaba,
Kesilen kelleler gelmez hesaba,
Osmanlı efratı dönmüş kasaba,
Dininin uğruna ölen ermeni!

Դեր Ջոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Կտրված գլուխներին էլ հաշիվ չկար,
Օսմանցի պետերը մսագործ դարձան.
Հանուն հավատի մեռնող հա՛յեր:

Հայ ժողովուրդն աննկարագրելի տառապանքով էր անցնում իր մահվան ճամփան.

Gide-gide, gidmez oldu dizlerim,
Ağla-ağla, görmeyiz oldu gözlerim,
Amanım, yaman halim pek yaman!
Der Zor çölünde kaldığım zaman.

Քայլելով-քայլելով՝ հոգնեցին ծնկներս,
Լաց լինելով՝ կուրացան իմ աչքերը,
Ավա՛հ, ավա՛հ, ողբալի է մեր վիճակը.
Դեր Ջորի անապատում մեր եղած ժամանակը:

Դեր Ջորի երգերի մեջ առանձին շարք են կազմում կողոպտված, որդեկորույս մայրերի եւ կույս աղջիկների ողբերգական պատկերները.

-Şu dağın ardında ermeni kızı var,-
Gidin, bakın çantasında nesi var?
-Güzöl gözleri var,
Sırma saçları var.-

- Այս լեռան թիկունքին հայ աղջիկ կա,
Գնացեք տեսեք պայուսակում ի՞նչ կա:
- Գեղեցիկ աչքեր կան,
Մետաքս վարսեր կան:

Իսկ թուրքական ոստիկաններն ու հրամանատարները հայ աղջիկներին վերաբերվում էին անասելի դաժանությամբ.

Sabahtan kalktım kapı kapalı,
Binbaşı geliyor eli zopalı,
Uğruna bırakmış kör ve topalı,

Առավոտյան վեր կացա՝ դուռը փակ գտա,
Հազարապետն եկավ, ձեռքին կար մահակ,
Կույր ու կաղերին զգած իր առաջ.

Dininin uğruna ölen ermeni!

Հանուն հավատի մեռնող հա՛յեր:

Տիգրանակերտից 80-ամյա Կարապետ Մկրտչյանը /ծ.1910թ./ հուզումով ու դողդոջուն ձայնով է մեզ պատմել իր մանկական հիշողության մեջ տպավորված պատկերները՝ միաժամանակ մրմնջալով հետեւյալ տողերը.

Der Zor geldi bir Şekir paşa,
Atını bağladı delikli taşla,
Ermeni sığmadı dağ ilan taşla:
Dininin uğruna ölen ermeni!

Դեր Ջոր եկավ մի Շեքիր փաշա,
Լծույզը կապեց ծակ քարի վրա,
Չորերում հայերին տեղ չմնաց.
Հանուն հավատի մեռնող հա՛յեր:

«Դեր Ջորի ճամփին՝ Մերդինի մոտ, - շարունակել է նա, - մեզ՝ փոքրերիս, ջուկեցին, տարան ձորի կողմը, հերթ կայնեցուցին: Երեք-չորս հարյուր հոգիի չափ մեծեր էին, այդքան ալ երեխաներ էինք: Մեզ՝ երեխեքիս, կանաչ դաշտի վրա նստեցուցին. մենք չգիտեինք ի՞նչ պիտի ըլլա:

Մայրս իր հերթը խախտելով զալիս էր մեզի համբուրո՞ւմ, համբո՞ւրում, գնում: Մենք՝ ես, մեծ եղբայրս եւ փոքր եղբայրս, որը մեկ տարեկան էր, հեռվից տեսնում էինք մի շարան կանաչք հերթին մեջ շարժվում են. մեր մայրը անոնց մեջն էր: Տուներն երբ ելանք, մեր մայրը ազգային տարագնեով էր՝ թավիշ, ոսկեկար հագուստներով, գլուխը զարդարված էր ոսկեդրամներով, վիզը՝ ոսկի շղթա կար, հագուստներում մեջը երկու կողմը քսանհինգ-քսանհինգ ոսկի էր կարած՝ զաղտնի: Վերջին անգամ, երբ մայրս եկավ, մեզի խենթի պես համբուրեց, կիշեմ, արդեն միայն տակի ճերմակ ներքնազգեստով էր. ո՛չ զարդ կար, ո՛չ ոսկի, ո՛չ ալ թավիշե հագուստները...: Մենք՝ երեխեքս, բանից անտեղյակ էինք: Էնտեղ բաներ մը կատարվում են, բայց մենք չգիտեցք ի՞նչ է կատարվում: Դու մի՞ ըսեր, բոլորին հերթով հագուստները հանում, մի կողմի վրա շարում, բոլորին մերկացնում էին, կացինով գլուխը կտրում, նետում էին ձորը...: Մայրս վերջին անգամ նորեն եկավ մեզի համբուրեց, գնաց: Ամեն անգամ գալուն պահակին մի դեղին ոսկի կուտա եղեր, որ մեր մոտ գա՝ իր երեք փոքր երեխեքին տեսնալու, մեզի համբուրելու...»: Պատմական այս իրողությունների հիման վրա է հյուսվել նաեւ ժողովրդական երգը.

Sabahtan çıktım, çantama baktım,
Ağlaya-sızlaya boynuma dağdım,
Malımı-mülkümü devlete sattım,
Haşlığım tükendi, evlâdım sattım.

Առավոտյան արթնացա տուրակս նայեցի,
Լալով-ողբալով վզիցս կախեցի,
Ունեցվածքս պետությանը հանձնեցի.
Դրամս սպառվեց՝ զավակս բաշխեցի:

85-ամյա Գրիգոր Գյոզալյանը /ծ.1903թ./ անհուն երախտագիտության

զգացումով էր հիշում Համա քաղաքի մոտ, Մուհարրի գյուղի արաբ-քրիստոնյա բարի պառավին, որն ամեն երեկո իր եփած փլավն ու գոտու մեջ խցկած հացի կտորները պատերի տակ ուժասպառ ընկած հայ որբուկներին զաղտագողի բաշխելով, ծածուկ անհետանում էր մթության մեջ: Նման փաստը եւս բանաստեղծական տեսք է ստացել հետեւյալ երգի մեջ, որտեղ որդեկորույս մայրն շտապում է գտնելու «արաբի գյուղում» ապաստանած զավակներին.

Yol ver, Habur, yol ver, geçeyim çölü,
Evlâdim çis - çıplak arabin köyü.*

Խա՞րուր, ճանկա տուր, անապատն անցնեն,
Չավակս արաբի գյուղում՝ տկլոր ու մերկ:*

«Պատահում էր այնպես, - պատմել է ֆրնդըճագցի Հարություն Ալբոյաջյանը /ծ.1904 թ./, - որ տղաներին փախցնում էին, քլփատում էին, ստիպում էին միայն թուրքերեն խոսել, իսկ աղջիկներին՝ բռնաբարում էին, սպանում կամ կնության էին առնում, որպեսզի ազնվացնեն իրենց ցեղը»:

Մեր գրառած պատմական վկայությունների մեջ կան բռնի հավատափոխության բազմաթիվ դեպքեր:

Մարիամ Բաղդիշյանը /ծ.1909 թ./ պատմել է, թե ինչպես ինքը հագիվ հինգ-վեց տարեկան էր, երբ աքսորի ճամփաներին իր քրոջ հետ անապատի ավազների վրա պառկած իրենց մայրիկի խոպոպների հետ էին խաղում՝ չիմանալով, որ նա արդեն մեռած է: Հետո ինչ որ մի արաբ կին նրան տանում է իր տունը, որտեղ փոքրիկ Մարիամը չորս տարի փառչով ջուր է կրում ջրհորից: Մի անգամ, երբ նրա դեմքն ուզում էին կապույտ թանաքով դաջել, նա զաղտնի փախչում է եւ մի քահանայի շնորհիվ ապաստան գտնում հայկական որբանոցում:

*Türkler başladı evlad kaçmaya,
Analar kıymadı üzü öpmeye,
Baktım ki gizlica ağlıyor yaman,
Dininin uğruna ölen ermeni!*

*Թուրքերն սկսեցին զավակ փախցնել,
Մայրերը չհասցրին այտերն համբուրել,
Տեսա՝ ծածուկ սաստիկ էին լաց լինում,
Հանուն հավատի մեռնող հա՛յեր:*

«Պատահում էր նաեւ այնպես, - պատմել է զեյթունցի Եվա Չուլյանը /ծ.1903 թ./, - որ մայրերի մոտից փախցնում էին երեխաներին կամ աղջիկներին, բռնաբարում էին հարսներին ու աղջիկներին, հետո, կապկպելով նետում էին ձորը կամ չորացած ջրհորների մեջ եւ կրակի տալով, բոլորին՝ այրում»:

Hayatın çeşmeyi buz gibi akar,

Բակի ծորակը սառույցի պես է հոսում,

* Դեր Չորի մոտից հոսող գետ:

*Türk bacıları çadırdan bakar,
Ermeni geliyor elleri bağla:
Analar ağlıyor - çocuğum deyî,
Gelinler ağlıyor - hocamım deyî,
Kızlar ağlıyor - namusum deyî.*

*Թուրք բաջիները վրանից են նայում,
Հայերն են գալիս ծեռնակապերով,
Մայրերն են լալիս՝ զավակս ասելով,
Հարսներն են լալիս՝ ամուսինս ասելով,
Աղջիկներն են լալիս՝ պատիվս ասելով:*

Դժոխային այդ իրարանցման մեջ մայրերը կորցնում էին զավակներին, զավակներն՝ իրենց ծնողներին:

*Der Zor köprüsü dar dır-geçilmez,
Kan olmuş sular-bir tas içilmez,
Anadan, babadan vaz geçilmez,
Dininin uğruna ölen ermeni!*

*Դեր Չորի կամուրջը նեղ է՝ անցնել չի լինի,
Ջրերն արնոտ են՝ մի քաս խնել չի լինի,
Մորից-հորից բաժանվել չի լինի,
Հանուն հավատի մեռնող հա՛յեր:*

Պետք է ենթադրել, որ այդ աննկարագրելի թոհ ու բոհի մեջ ծնողներին կորցրած, որբ ու անօգնական երեխաներն են հորինել հետեւյալ երգի տողերը.

*Der Zor çölünde şaşıldım, kaldım,
Yitirdim anamı, yitirdim babamı,
Vay anam, vay anam, halımız yaman!
Der Zor çölünde kaldığım zaman.*

*Դեր Չորի անապատում շփարեցի՝ մնացի,
Մորս ու հորս այնտեղ կորցրեցի,
Վա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Չորի անապատում մեր եղած ժամանակը:*

Եվ կամ կատարվել է ավելի սոսկալին. քայլելու անկարող մեծահասակ հարազատներին ստիպված թողել են ճամփին ու թուրք ոստիկանների մտրակների տարափի տակ, արցունքն աչքերին՝ շարունակել իրենց մահվան ճամփան: Այդ մասին են պատմել ու երգել դաջված դեմքով զեյթունցի Գայանե Ատուրյանը /ծ.1909թ./ եւ շատ ուրիշներ.

*Der Zor çölünde yoruldum, kaldım,
Anamı, babamı yolda bıraktım,
Vay anam, vay anam, halımız yaman!
Der Zor çölünde kaldığım zaman.*

*Դեր Չորի անապատում հոգնած մնացի,
Պորս ու մորս ճամփին թողեցի,
Վա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Չորի անապատում մեր եղած ժամանակը:*

Թեպետ մասամբ օտարացած հայ որբուկն ստիպված թուրքերենով է արտահայտել իր հոգու վիշտը, սակայն նա դեռ չի մոռացել իր համար նվիրական «մայրիկ» հայերեն բառը.

Yeşil kurban olayım geçen günlere, mayrik! Դալար գոհ դառնամ անցած օրերին, մայրիկ,*

* Օգտագործված է հայերեն «մայրիկ» բառը:

*Kınıldı kanatlarım, kaldım çölerde, mayrik!
Anasız, babasız, mayrik!
Düşüm diyar kurbette, mayrik!
Ya ben ağlamayım, mayrik!
Kimler ağlasın, mayrik!*

*Փշովեցին թեւերս, մնացի անապատում, մայրի՛կ,
Առանց հայր, առանց մայր, մայրի՛կ,
Ընկա օտար վայրեր, մայրի՛կ,
Եթե ես լաց չլինեմ, մայրի՛կ,
Ո՞վքեր լաց լինեն, մայրի՛կ:*

Ահա թե ինչու՝ հավատափոխ չլինելու, թուրքի կին չդառնալու, թուրք երեխաներ չծնելու համար, հայ աղջիկները «Ձեռներ ի ձեռ բռնեցին, իրենք զիրենց Եփրեւ /իմա՝ Եփրատ/ գետը նետեցին», արցունքներով ներգում էր արժանահիշատակ երգասաց Սարիամ Բաղդիշյանը եւ վերհիշելով իր տխուր մանկությունը, սրբում աչքերի արտասուքը:

*Giden, giden ermeni kızlar!
Bir gün ölüm bize düşer,
Düşmana avrat olmamaya,
Yepراین içinde ölüm bulayım..*

*Գնացող, գնացող, հայ աղջիկներ,
Մի օր մահը դեմ կգա մեզ.
Թշնամուն կին չդարձած՝
Եփրատի մեջ գտնենք մահ:*

Սերսինցի Սողոմոն Եթենեկյանը /ծ.1900թ./ իր հուշերում մեզ պատմել է. «Երեք-չորս հարյուր հոգի գոտիներնին հանած, իրար կապած, իրար ետեւից, յա՛լլա, Եփրատ գետը կնետվեին. ջուրին երթալը չէիր տեսնար. լեշերը դուրս ելած, բերդի պես իրար վրա դիզված էին. շուները կատղած էին մարդու միս ուտելեն»:

Պատմական այդ իրողությունը եւս գեղարվեստական լեզվով արտահայտված չափածոյի է վերածվել.

*Der Zor çölleri taşlıdır-geçilmez,
Yepراین getirin* sular acıdır -
Bir tas içilmez!
Ermeni kan ile su da içilmez.*

*Դեռ Չորի անապատը քարոտ է՝ անցնել չի լինի,
Եփրատ գետի ջրերը դառն են՝
Մի թաս խմել չի լինի.
Հայերի արյունով ջուրը խմել չի լինի:*

Ամենադաժան ձեւերով նահատակվում էր հայ ժողովուրդը: Բռնի տեղահանությունների ու աքսորի ճամփաներից շատ քչերն էին հրաշքով վերադառնում:

*Meyvasız ağaçlar meyvaya döndü,
Muhacir gidenin yarısı dönmedi.*

*Անպտուղ ծառերը պտղով ծանրացան,
Գաղթականների կեսը վերադարձավ:*

ճարահատ ժողովուրդն իր զայրույթն արտահայտել է անեծքով.

* Օգտագործված է հայերեն «գետ» բառը:

*Şu muhacirlik icat eden
Cennet yüzü görmesin!*

*Այս տեղահանությունը հնարողը
Թող չարժանանա դրախտի:*

Եվ կամ՝

*Şu sürgünlük icat eden
Cehennem yoluna kurban olsun!*

*Այս արտորդ հնարողը
Դժոխքի ճանկին թող զոհվի:*

Հայ ժողովուրդն անիծել է նաեւ թուրքական կառավարության դե-կավարներին՝ Թալեաթին եւ Էնվերին, որոնք ծրագրված կերպով կազմակերպել էին հայ ժողովրդի հրեշավոր այդ նախնիրը:

*Atım bağladım delikli taşla,
Kör olasin sen, Enver paşa!
Sen olamayısın, sen geberəyısın,
Şun*-Talaat paşa!
Ermenileri dağıttın dağlarda, taşla.*

*Նժույգս կապեցի ծակ քարին,
Կուրանաս դու, Էնվե՛ր փաշա,
Թո՛ղ չծնվեիր, թո՛ղ սատակեիր,
Շուն-Թալեա՛թ փաշա.
Հայերին ցրեցիք լեռ ու անապատ:*

Տեղահանությունն ու կոտորածն արդեն ընդգրկել էին ոչ միայն Արեւ-մտահայաստանն ու Կիլիկիան, այլեւ Արեւելյան ու Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ գավառները: Այլ կերպ ասած՝ ամբողջ Օսմանյան Թուրքիան:

Հայ ժողովրդի դահիճ Թալեաթ փաշան լկտիորեն պարծենում էր, թե ինքը մի քանի ամսվա ընթացքում լուծեց Հայկական հարցը, այն ինչ որ սուլթան Համիդին չէր հաջողվել տասնամյակների ընթացքում:

Սակայն ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերազարթնեց դարերի խորքից, ժառանգաբար արյան հետ եկող «Մահ իմացյալը» ստրուկ կյանքից նախընտրելու եւ բռնությանն ուժով դիմադրելու հերոսացման իր խիզախ ոգին:

Նույն տարվա հուլիսին Մուսա լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները որոշում են չենթարկվել տեղահանության կորստաբեր հրամանին:

Մուսա լեռան հերոսամարտի մասնակից 104 տարեկան Մովսես Փանոսյանը /ծ.1885թ./ մեզ հաղորդել է մուսալեռցիների տված երդումը. «Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ կմեռնեմ: Ես չեմ գնա ստրուկի պես մեռնելու. հրացանը ձեռքիս այստե՛ղ կմեռնեմ, բայց գաղթական չեմ դառնա»:

Պատմական այդ իրա-դարձության մասին են պատմել նաեւ Մովսես Բալաբանյանը /ծ.1891թ./ եւ Հովհաննես Իփրեջյանը /ծ.1896 թ./, որոնք նույնպես Մուսա լեռան հերո-սամարտին մասնակցել են:

Բողոքի ու վրեժխնդրության զգացումը համակում է բոլորին: Այր ու կին,

* Օգտագործված է հայերեն «շուն» բառը:

մանուկ ու ծեր, թողնելով իրենց ունեցվածքը, բարձրանում են Մուսա լեռան անմատչելի գագաթը՝ կռվով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին: Հիսուներեք օր համառ մարտեր են մղվում Եսայի Յաղուբյանի, Պետրոս Դնալքյանի եւ Տիգրան Անդրեասյանի գլխավորությամբ: Այդ ընթացքում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում: Հակառակորդը նոր ուժեր է կենտրոնացնում ընթոստ հայերին պատժելու համար: Մուսալեռցիների պարենն ու զինամթերքն սպառվում է: Նրանք ճարահատյալ լեռան ծովահայաց կողմից օգնություն ստանալու հույսով սպիտակ սավաններն իրար են միացնում՝ մեկի վրա գրում. «Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեցե՛ք», իսկ մյուսի վրա՝ կարմիր խաչի փրկության նշան եւ պարզում լեռան լանջին:

Սեպտեմբերի 5-ին Միջերկրական ծովի խորքով անցնող ֆրանսիական «Կիշեն» մարտանավը նկատում եւ դանդաղեցնում է ընթացքը: Մետաղյա արկերը վզին, մեջը օտար լեզվով գրված խնդրագրով, ծովն է նետվում Մովսես Գրըրյանը: Նա լող տալով հասնում է նավին, երեսը խաչակնքելով նավապետին է ներկայացնում նամակը: Սեպտեմբերի 14-ին ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» շոգենավը, անգլիական ռազմանավերի ուղեկցությամբ մոտենում է Մուսա լեռան եւ վերցնելով ավելի քան 4 հազար մուսալեռցիներին, փոխադրում է Պորտ Սայիդ, որտեղ նրանք պատսպարվում են բրեզենտյա վրանների տակ:

Պորտ Սայիդում անցկացրած չորս տարիների ընթացքում մուսալեռցիներն իրենց ապրուստը հայթայթում են սանրագործությամբ, գոլազործությամբ, գորգագործությամբ, ասեղնագործությամբ եւ այլ տոհմիկ արհեստներով:

Վերապրողները դեռ հիշում են, թե ինչպես իրենք անապատի հրաշեկ ավազների վրա գրելով են սովորել մեսրոպյան տառերը, մինչեւ որ մի քանի վրանների տակ սկսել է գործել Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնած Սիսվան վարժարանը՝ կից հիվանդանոցով ու որբանոցով:

Ազատության համար մարտնչած դյուցազնական մուսալեռցիներն իրենց սխրանքը գեղարվեստորեն արտահայտել են հետեւյալ կերպ.

*Osmanlinin askıyanları,
Musa dağın igitları,
Gelin, kızlar, çocukları,
Uyan, musadağlı, uyan!
Nam kaldırdın cümle cihan!*

*Օսմանական ասկյարները,
Մուսա լեռան կտրիճները,
Հարս ու աղջիկ, մանուկները,
Չարթնի՛ր, մուսալե՛ռցի, զարթնի՛ր.
Ողջ աշխարհում հռչակվեցիր:*

*Osmanlinin bombaları,
Musa dağın metanları,
Bin- binlerce topları,
Uyan, musadağlı, uyan!
Nam kaldırdın cümle cihan!*

*Օսմանական գնդակները,
Մուսա լեռան դիրքերը,
Հազար-հազար արկերը,
Չարթնի՛ր, մուսալե՛ռցի, զարթնի՛ր.
Ողջ աշխարհում հռչակվեցիր:*

*Fransızın vapurları,
Musa dağın duvarları,
Bin- binlerce çocukları,
Uyan, musadağlı, uyan!
Nam kaldırdın cümle cihan!**

*Ֆրանսիական մեծ նավերը,
Մուսալեռցոց աղոթքները,
Հազար-հազար հոգիները,
Չարթնի՛ր, մուսալե՛ռցի, զարթնի՛ր.
Ողջ աշխարհում հռչակվեցիր:**

Մուսա լեռան հերոսամարտն աշխարհը ցնցեց. այն ցույց տվեց մարդկությանը, թե ինչի է ընդունակ մի բուռ ժողովուրդ, եթե ունի հերոսական ավանդույթներ, ազատատենչ ոգի եւ միասնական կամքի ուժ:

Ֆրանց Վերֆելն իր «Մուսա լեռան քառասուն օրը» գրքում գեղարվեստական անկրկնելի գույներով է պատկերել մուսալեռցիների սխրանքը: Իր ժամանակին սակայն, աշխարհը չանսաց մեծ ավատրիացու ահազանգին, եւ ծնունդ առավ ավելի մեծ մի չարիք՝ ֆաշիզմը:

Այնուհետեւ, 1915 թ. հոկտեմբերին կազմակերպվում է Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը՝ Սկրտիչ Յոթնեղբայրյանի եւ Հարություն Ռասուկելենյանի գլխավորությամբ: Ոտքի է կանգնում Ուրֆայի ողջ հայությունը: Բոլորը մեկ մարդու պես կռվում են քսանհինգ օր ու գիշեր շարունակ:

*Urfa büyük-aynımaz,
Dibi gayım-dağılmaz,
Urfa'nın igitları
Hiç bir yere bulunmaz.*

*Ուրֆան մեծ է՝ չի քաժանվի,
Հատակը պինդ է՝ չի փոշվի,
Ուրֆայի կտրիճները
Ոչ մի տեղում չեն գտնի:*

Սակայն թուրքական կառավարությունը կանոնավոր զորք է ուղարկում եւ դաժան հաշվեհարդար տեսնում Ուրֆայի անձնվեր հերոսների հետ: Պատմական այդ իրադարձության մասին են պատմել ուրֆացի վերապրողներ խորեն /ծ. 1893 թ./ եւ Նվարդ /ծ. 1903 թ./ Աբլաբուտյաններն իրենց հաղորդած հուշերում:

Դեռեւս առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թվին, դաշնակից երկրների՝ Անգլիայի եւ Ֆրանսիայի գաղտնի համաձայնագրով /Սայքս-Պիկո/ Թուրքիայի պարտության դեպքում, երկու միլիոն վեց հարյուր հազար հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հսկողությանը: Անգլիայի եւ Ֆրանսիայի իշխանությունները Հայկական Ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կռվեն Թուրքիայի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվի քաղաքական լայն հնարավորություններ եւ հայ կամավորները կառնան նորակազմ Ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքապահ զինվորներ:

Ուստի թուրքական բանակից, աքսորի ճամփաներից, տարբեր վայրերից

6.ԱՎԱԶԼՅԱՆ Վ., Մուսա լեռ, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ. 16, Երեւան, 1984, էջ 132:

եւ նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները /մուսալեռցի, զեյթունցի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հուսեմիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերոցի, արաբկիրցի եւ այլ վայրերից/ զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արեւելյան /Հայկական/ լեգեոնը:

Հայ կամավորներն իրենց անմեղ մահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում գերմանաթուրքական զորքերին՝ Պաղեստինի մոտ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը: Հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական հրամանատարության դրվատանքին: Գեներալ Ալենքին 1918 թ. հոկտեմբերի 12-ին Հայ Ազգային պատվիրակության նախագահ Նուպար փաշային հղած հեռագրում նշել է. «Ես հպարտ եմ հրամանատարությանս տակ հայկական զորամաս ունենալուս համար: Անոնք կռվեցան փայլուն կերպով եւ մեծ բաժին ունեցան հաղթանակի մեջ»⁷:

Պատերազմից հետո կնքված Սելրի պայմանագրով /1920 թ./ Կիլիկիայի վրա հաստատվելու էր Անտանտի երկրների հսկողությունը, եւ թուրքական զորքերն իբր արդեն դուրս էին բերվելու Կիլիկիայից:

Այդ իրադարձություններով խանդավառված, Դեր Զորից, Ռաս ուլ Այնից եւ այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված ամեն կողմերի հայ աքսորականները, աստիճանաբար վերադառնում եւ տեղավորվում են Կիլիկիայում: Նրանք ապագայի նկատմամբ հույս ու հավատով սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները: Սակայն քեմալականներին հաջողվում է լեզու գտնել դաշնակից տերությունների հետ եւ ստիպել ֆրանսիացիներին՝ իրենց խաղաղապահ զորքերը դուրս բերել Կիլիկիայից:

Զնանաչելով Սելրի պայմանագիրը եւ օգտվելով ֆրանսիական զինվորական վարչության անվճռականությունից ու թուլությունից, քեմալական զորքերն ու տեղի չեթեններն իրենց գեներալ ուղղում են Կիլիկիայի հայության դեմ: 1920 թվի հունվարից նրանք գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերի վրա:

Քսաներկու օր տեւող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի տասնմեկ հազար հայեր կոտորվում են ու մոխրացվում:

*Maraşta Maraş derler, yaman, yaman!
Maraş, bu nasıl Maraş derler?
Maraşın içinde kilise yazar,
Kilise içinde emneni yazar!*

*Ավա՜ղ, Մարաշին Մարաշ են ասում,
Մարաշ, քեզ ի՞նչպես են Մարաշ ասում,
երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում,
եկեղեցում՝ հայերին ողջակիզում:*

7. ԹԵԼԵԿՅՈՒՆ Մ., Սիւ-Մառյան, Բեյրութ, 1949, էջ 599:

Մարաշցի ականատես-վկաներից Եվգինե Մայիկյանը /ծ.1898թ./ մեզ պատմել է, թե ինչպես բարձունքի վրա կառուցված Ս.Քառասուն Սանկանց եկեղեցու շենից ցած էր հոսում ողջակիզված հայերի թանձր ճարպը: Այնուհետեւ ողջ մնացած ութ հազար մարաշցիներ, Ուրֆայի վեց հազար հայերի հետ, հարկադրված բռնազաղթի ճամփան են բռնում դեպի Սիրիա՝ Հալեպ, Լիբնան՝ Բեյրութ, Դամասկոս, Երուսաղեմ, Բաղդադ եւ Անատոլիայի հունական տիրապետության տակ գտնվող շրջաններ:

1920 թվի ապրիլի 1-ին քեմալականները պաշարում են Այնթապը: Պատերազմի ավարտից եւ զինադադարից հետո այնտեղ վերաբնակված շուրջ տասը հազար այնթապցի եւ ութ հազար սեբաստացի հայ գաղաթականների հազիվ խաղաղված կյանքը նորից է փոթորկվում: Տեղում ստեղծվում է ինքնապաշտպանական-դիմադրողական կենտրոն՝ Աղուր Լեւոնյանի ղեկավարությամբ: Պատմական այդ դեպքերի մասին է պատմել այնթապցի Գեւորգ Զեքիմյանը /ծ.1937 թ./ եւ հաղորդել իր մորից լսած հետեւյալ երգը:

*Adur paşa! Kalk seni,
Gam çirayı, yak seni,
Türkler hücum ediyor,
Kamavorlar' arş edin!*

*Ադուր փաշա, արթնացիր,
Քո ռումբերը շուտ մետիր,
Թուրքերը գրոհում են,
Կամավորներ՝, արշավեք:*

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գոզան-օղլու Դոդան բեյն իր բազմահազար զորքով պաշարում է մաեւ Հաճըն քաղաքը, որի 30-35 հազար հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն վեց հազարը:

*Doğan bey de geldi girdi Hacına,
Yazık oldu sana, Koca Hacı'n,
Orada Kapıştı epeyi bizim malımız,
Ayak altına gitti tüm bizim namusumuz,
canımız.*

*Դոդան բեյն եկավ, մտավ Հաճըն,
Ախտոս եղավ քեզ, հսկա Հաճըն,
Կողոպուտի զնաց մեր ունեցվածքը,
Ոտնատակ զնաց մեր պատիվն ու կյանքը:*

Հակառակորդի կարծիքով Կիլիկիայի հայկական միջնաբերդ Հաճընը կործանելն ու հայերին բնաջնջելը շատ դյուրին գործ էր: Սակայն հաճընցիները լի էին վճռականությամբ: Նրանք իրենց կառավարիչ-փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության գերագույն խորհուրդը: Պաշտպանության հրամանատար են ընտրում Զորավար Անդրանիկի զինակից, սպա Սարգիս ճեպեճյանին: Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական չորս շրջանների: Փորում են խրամատներ:

* Օգտագործված է հայերեն «կամավոր» բառը:

Մարտական տրամադրությունը համակում է բոլորին: Ձեռք կրելու ընդունակ 16-50 տարեկան 1200 տղամարդկանց բաժանում են եղած-չեղած 132 հրացանը: Հետագայում ձեռք է բերվում նաեւ 300 հրացան, սակայն այդ եւս խիստ անբավարար էր բոլշեւիկյան անսպառ ռազմամթերքով զինված քեմալական բանակի դեմ կռվելու համար: Այդ մասին է վկայում նաեւ զեյթունցի Հովսեփ Բշտիկյանը /ծ. 1903 թ./ իր պատմած հուշի մեջ:

Ահա թե ինչու զենքի խիստ կարիք զգացող հաճընցիներն անհամբերությամբ սպասում էին Ադանայի Ազգային միության միջոցով դրսից ակնկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլեւ կռվող նոր ուժեր պիտի հասնեին: Սակայն ոչ մի օգնություն չի հասնում, եւ հաճընցիների վիճակը դառնում է հուսահատական: Ռազմամթերքի պակասը նեղում է հերոս հաճընցիներին, իսկ սովն առիպում է նրանց ուտել շուն, կատու, մուկ: Այդ մասին է պատմել հաճընցի վերապրող Ահարոն Մանկրյանը /ծ. 1903 թ./: Այնինչ թշնամին նորանոր ուժեր է կենտրոնացնում: Ֆրանսիական զինվորական ներկայացուցիչները, վարելով երկդիմի քաղաքականություն, թեպետ խոստացել էին Հաճընի ինքնապաշտպանության համար տրամադրել սննդամթերք եւ զինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն հարգում, այլեւ՝ թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանության կազմակերպման մասին: Երկարատեւ համառ մարտերից, ութ ամսվա հերոսական դիմադրությունից հետո քեմալականներին հաջողվում է հրետանու կրակոցներով ավերել ու իրկիզել Հաճընի քարաշեն տները: Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճընցիներ անխնա կոտորվում են, միայն 380 հոգու հաջողվում է ճեղքելով դուրս գալ ահավոր հրդեհի շրջապատումից:

Ընկնում է նաեւ ընդհատումներով 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, Կիլիկիայի երբեմնի մայրաքաղաք Սիսը, հերոս Ձեյթունը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առեւտրի կենտրոն Ադանան եւ հայերով բնակեցված Կիլիկիայի այլ եւ այլ բնակավայրեր: Քանի որ ֆրանսիական կառավարությունը դրժելով իր դաշնակցային պարտավորությունները, 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքած պայմանագրով Կիլիկիան հանձնում է Թուրքիային՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը:

Թեպետ թուրքական կառավարությունը դաժանորեն ընկճում էր տարբեր վայրերում ծայր առած դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային տարրական իրավունքների եւ ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ:

Կիլիկիայի հայության բռնազաղթից հետո, հերթը հասել էր Անատոլիայի

հայերին, որոնց մեծ մասն արդեն եղեռնի ժամանակ անխնա կոտորվել էր, իսկ հրաշքով փրկվածներն իրենց գոյությունը շարունակում էին հունական տիրապետության տակ գտնվող հայաշատ բնակավայրերում եւ հատկապես Ձմյուռնիայում:

1922 թ. քեմալականները հրո ճարակ են դարձնում նաեւ Ձմյուռնիայի հունական եւ հայկական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ:

Ձանգվածային այդ ողբերգության մասին աֆիոնգարահիսարցի Բերբերյան Սմբյուլը /ծ. 1909 թ./ արցունքներով է երգել հետեւյալ եղերերգը.

*Karadenizde - firtina,
Al pirtini sirtına,
Mayrik*, düşman geliyor!
Kızın kalmış yoluna.*

*Սեւ ծովում՝ ահեղ փոթորիկ,
Ունեցվածքդ՝ առ շալակիդ,
մայրիկ, թշնամին է գալիս,
Սղեղիդ մնացել է ճամկին:*

Այդ ահավոր իրադարձությունը, որին ուղեկցում էր անխիղճ թալանն ու կոտորածը, արեւմտահայության հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ»: Այդ դեպքերին ականատես աֆիոնգարահիսարցի Արփինե Բարթիկյանը /ծնվ. 1909 թ./ հուզումով է վերհիշել, որ ամենից առաջ Ձմյուռնիայի Հայ թաղն են կրակի տվել: Ետեւը՝ հուր էր, առաջը՝ ջուր: Թոհ ու բոհի այդ գեհեներից ազատվում էին միայն նրանք, ովքեր իրենց մնացած վերջին ոսկեդրամներն ու զարդերը տալիս էին թուրքերին՝ իրենց կյանքը փրկելու համար: Իսկ ովքեր միջոց չունեին, արհամարհելով մահը, նետվում էին ծովի ալիքների մեջ, լողալով հասնելու հեռվում խարիսխ գցած եվրոպական դրոշակներ կրող շոգեմավներին, որոնք հայ անտունիներին տանելու էին ուր որ պատահեր:

Այդպես ստեղծվում է Հայ Ափյուռքը որպես պատմական իրողություն, սակայն կորցրած Երկրի երազը շարունակում է մխալ հայ ժողովրդի հիշողության մեջ, քանզի այդ ժողովրդի հավաքական հիշողությունն է, որը նրա պատմությունն է, իսկ ժողովրդի պատմությունը եղծել անհնար է:

Այսպիսով, սերունդներին ավանդվող հայ ժողովրդական հուշապատումներն ու թուրքալեզու երգերն իրենց պատմաճանաչողական արժեքով դառնում են Հայոց Մեծ եղեռնն ու նրան հաջորդող պատմական իրադարձությունները ժողովրդական պարզ լեզվով լուսաբանող վկայություններ, զեղարվեստական, բայց եւ հավաստի, առարկայական ու փաստագրական վավերագրեր:

* * *

**ГЕНОЦИД
В ВОСПОМИНАНИЯХ
И ТУРКОЯЗЫЧНЫХ ПЕСНЯХ ЗАПАДНЫХ АРМЯН
ВЕРЖИНЕ СВАЗЛЯН**

РЕЗЮМЕ

За последние годы еще более возрос интерес к сыгравшим роковую роль в истории армянского народа событиям Геноцида, тем более что турецкая историография пытается исказить достоверные исторические события.

В этом смысле, кроме опубликованных официальных материалов, важный историко-фактологический интерес представляют также создававшиеся под непосредственным впечатлением названных событий народные воспоминания и песни исторического характера, которые в Армении по разным причинам почти не были записаны и исследованы.

После Геноцида 1915 года, депортации из Киликии (1921г.) и бедствия Измира (1922г.), значительная часть западных армян была уничтожена, а чудом спасшиеся расселились в различных странах мира, создав Армянскую Диаспору как историческое явление.

Впоследствии многие из очевидцев-свидетелей этих трагических событий из Константинополя, Греции, Франции, Сирии, Ливана, Ирака, Египта, балканских и других стран периодически репатриировали на Родину-Армению и поселились во вновь отстроенных селениях, символизирующих их некогда былую колыбель.

Настоящая работа включает народные воспоминания и армянского происхождения туркоязычные песни исторического характера, которые мы стали записывать начиная с 1950-х годов в Армении (частично - в Диаспоре) от чудом спасшихся от Геноцида 230-и свидетелей-очевидцев старшего поколения.

В процессе записи материалов мы старались быть верны устной речи и языковым особенностям сказителей.

Представленные народоведческие материалы цитируются по книге: СВАЗЛЯН В. ГЕНОЦИД: Устные свидетельства западных армян, Ереван, 1995.

Эти народоведческие материалы правдиво отображают организованные младотурками воинские призывы и военные сборы, массовые высылки и боины армян, а также вспыхнувшие в те трагические дни героические самооборонительные сражения Вана, Сасуна; Муша, Шатаха, Шапин-Гараисара, Муса Дага, Урфы, позднее (1920-1921гг.)- Мараша, Айнтапа и Аджна.

Хотя и освободительные движения были подавлены турецким правительством, самоотверженные герои, которые боролись за свои элементарные права и физическое существование нации, оставили блестящий след в истории армянской национально-освободительной борьбы.

В течение четырех десятилетий, слово за словом, фрагмент за фрагментом записанные и представленные здесь народоведческие материалы своей самобытностью и историко-познавательной ценностью становятся достоверными, фактологическими, документальными свидетельствами, простым народным языком отображающими события Геноцида армян.

**GENOCIDE
IN THE MEMOIRS AND TURKISH LANGUAGE SONGS
OF THE WESTERN ARMENIANS**

VERJINÉ SVAZLIAN

SUMMARY

Recently the interest around the Armenian nation's fatal Genocide increased, as far as the Turkish historiography obstinate to distort the reliable historical events. In a sense, except of the official published documents, the folk songs and memoirs, created directly under the impression of the events mentioned above, have an exceptional historico-factual importance and were not inscribed and researched in Armenia.

After the Genocide of the Armenians in 1915, the deportation from Cilicia (1921) and the disaster of Ismir (1922), considerable part of the Western Armenians were exterminated. The rest, who escaped and survived by miracle, remained homeless and unmotherland. So they were obliged to settle in different countries of the world, creating the Armenian Diaspora as a historical phenomenon. After long wanderings, most of them repatriated to Soviet Armenia and settled in new localities which symbolized their past cradle.

The memoirs and folk songs of historical character (in Armenian and Turkish languages), which, since 1950s, we have inscribed in Armenia and partly in the Diaspora, are created by the Armenians deported from Western Armenia, Cilicia and the localities of Anatolia, who reproduced the eldest generation of eye-witness repatriants, saved by miracle from the Genocide. Examined folk materials are cited from our book V.Svazlian. GENOCIDE: Oral Evidences of Western Armenians. Yerevan, 1995 (in Armenian).

These factual documents really reflect the military muster, the mass exile, massacre and slaughter organized by the Young Turks, also the heroic self-defence and the overwhelms of Van, Sasoun, Moush, Shatakh, Shapin-Garahisar, Moussa Dag, Ourfa and other places, later in 1920-1921 Marash, Ayntap, Hadjin.

In spite the movements were crushed by the Turkish autocracy, the fearless heroes, who struggled for their elementary rights and physical resistance of their nation, left a bright sign in the history of the national liberation struggle.

In the process of noting the materials we tried to be faithful to the oral speech of 230 informants, to the specific dialogue of their languages.

In the course of tens of years period word by word, fragment by fragment the inscribed and presented oral materials, because of their original and valuable historical cognition, remain reliable, factological and documental evidences, reflecting by a simple folk language the events of the Armenian Genocide.

LE GÉNOCIDE
D'APRÈS LES TÉMOIGNAGES DES ARMÉNIENS OCCIDENTAUX
ET LES CHANSONS EN LANGUE TURQUE

VERJINÉ SVAZLIAN

RÉSUMÉ

Ces dernières années, l'intérêt ne cesse de grandir à l'égard des événements du Génocide ayant joué un rôle fatal dans l'histoire du peuple arménien, car l'historiographie turque altère obstinément les faits historiques dignes de foi. Dans cette optique, outre les documents officiels publiés, une grande valeur historique et factologique s'attache aux chants folkloriques et commémoratifs composés sous l'impression immédiate des événements mentionnés, qui n'ont jamais encore été enregistrés ni étudiés en Arménie.

Après le Génocide des Arméniens en 1915, la désertion de la Cilicie (1921) et la catastrophe de Smyrne (1922), lorsque la majeure partie des Arméniens d'Arménie Occidentale, de Cilicie et d'Anatolie sont massacrés, ceux qui échappent par miracle, restés sans abri et sans patrie, sont contraints à se disperser à travers le monde en créant la Diaspora Arménienne en tant que phénomène historique.

Après de longues errances, nombre de ces Arméniens se rapatrient en Arménie Soviétique et s'installent dans les localités nouvellement construites qui portent le nom de leur pays d'origine.

Le présent recueil inclut les oeuvres commémoratives et les chants folkloriques de caractère historique (en arménien et en turc), composés par les Arméniens déportés d'Arménie Occidentale, d'Arménie Cilicienne et des provinces peuplées d'Arméniens d'Anatolie, représentants de la génération aînée des rapatriés, témoins oculaires sauvés par miracle du Génocide, que nous avons enregistrés à partir des années 1950 en Arménie et partiellement dans la diaspora.

Les documents folkloriques sont cités d'après: (V.Svazlian. GENOCIDE: Témoignages oraux des Arméniens occidentaux. Erévan, 1995, en arménien).

Ces documents factologiques sont des témoignages authentiques de recrutements de soldats, de rassemblements militaires, de déportations en masse et de massacres organisés par les gouvernements des Jeunes Turcs, ainsi que de héroïques batailles d'autodéfense livrées en ces jours tragiques par les Arméniens de Van, Sasoun, Mouch, Chatakh, Chapin-Garahisar, Moussa Dag, Ourfa et d'autres lieux, de même que plus tard (1920-1921) par ceux de Marache, d'Ayntap et de Hadjen.

Bien que ces mouvements de libération nationale aient été écrasés par l'autocratie turque, les courageux héros ayant combattu pour les droits élémentaires de l'homme et l'existence physique de la nation ont brillé d'un éclat sans pareil dans l'histoire de la lutte de libération nationale du peuple arménien.

En enregistrant ces sujets, nous avons tâché de rester fidèle au langage oral de nos 230 narrateurs et à ses particularités linguistiques et dialectales.

Le folklore oral enregistré au cours de plusieurs décennies mot par mot, phrase par phrase, et présenté dans ce recueil est d'une originalité et d'une valeur historique telles qu'il en devient un témoignage factologique et documentaire digne de foi, exprimant en simple langage populaire les événements du Génocide des Arméniens.



ՎԵՐԺԻՆԵ
ՍՎԱԶԼՅԱՆ

Բանահավաք, բանագետ, ժողովրդագետ, Վերժինե Սվազլյանը ծնվել է 1934 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, գրող-հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանի ընտանիքում:

1947 թ. ծնողների հետ հայրենադարձվել է Մայր-Հայաստան, «Գերազանցությամբ» ավարտել է Երևանի Ն.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Հայոց լեզվի եւ գրականության բաժինը:

1950-ական թվերից անձնական նախաձեռնությամբ սկսել է գրի առնել եւ անհետ կորստից փրկել Արեւմտահայաստանից, Կիլիկիայից եւ Անատոլիայի հայաբնակ գավառներից բռնազաղրված-տարագիր հայրենադարձների հաղորդած բանահյուսական բազմազան ստեղծագործություններն ու Մեծ եղեռնից վերապրողների պատմած հուշերը:

1958 թվից աշխատել է ՀՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում: Ասպիրանտական ուսումնառության շրջանում եղել է Մ.Աբեղյանի անվան անհատական քոչակառու:

1961 թվից աշխատել է ՀՀ ԳԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում, իսկ 1996 թվից՝ նաեւ ՀՀ ԳԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

1965 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1995 թվին՝ դոկտորական թեզերը: Աշխատություններն են.

«Սարգիս Հայկունի. կյանքն ու գործը», Երևան, 1973:

«Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական բազմահատորյակի «Արցախ-Ուտիք», հ.6, Երևան, 1973, «Տարոն-Տուրուբերան», հ.12, Երևան, 1984, «Վան-Վասպուրական» հ.15:

«Մուսա լեռ» բանահյուսական ժողովածուն, Երևան, 1984 /արժանացել է ՀՀ ԳԱ նախագահության «Գովեստագրին» եւ Մուսա լեռ Հայրենակցական միության շնորհած «Պատվավոր մուսալեռցի» ոսկե մեդալին/:

«Կիլիկիա. արեւմտահայոց բանավոր ավանդությունը», Երևան, 1994:

«Մեծ եղեռն. արեւմտահայոց բանավոր վկայություններ», Երևան, 1995:

"Геноцид в воспоминаниях и туркоязычных песнях западных армян", Ереван, 1997.

Հեղինակ է նաեւ գիտական մի շարք հոդվածների, որոնք լույս են տեսել Հայրենիքում եւ Սփյուռքում:

Մասնակցել է հանրապետական եւ միջազգային գիտաժողովներին՝ հանդես գալով բանագիտության, ժողովրդագիտության եւ Հայ Դատին առնչվող թեմաներով:

ՎԵՐԺԻՆԵ ԳԱՌՆԻԿԻ ՍՎԱԶԼՅԱՆ

**ՄԵԾ ԵՂԵՈՆԸ
ԱՐԵՎԱՏԱՅԱՅՈՑ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ
ԵՎ ԹՈՒՐԹԱԼԵԶՈՒ ԵՐԳԵՐՈՒՄ**

**«Ապագա» Ս.Պ.Ը. տպարան
Հասցեն՝ Մ. Խորենացի 60
Հեռախոս 57.07.79
Տպաքանակ՝ 500:**

